

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ, 1.17-րդ և 1.20-րդ կետերի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի կողմից հաստատված 2012թ. մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի աշխատանքային ծրագրի պահանջներին համապատասխան մարզի տարածքում բնապահպանության և բնօգտագործման /անտառվերականգնում, անտառահատում, խոտհունձ, արածեցում, ձկնորսություն և խեցգետնաորսություն, ընդերքօգտագործում և այլն/ օրինականությունն, ինչպես նաև Սևանա լիճը գոտևորող ճանապարհամերձ հատվածներում և „Սևան,, ԱՊ,, պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքում տեղակայված սպասարկման օբյեկտներում /լողափեր, գազալցակայաններ, բենզալցակայաններ, ավտոտեխսպասարկման ու լվացման կետեր, սննդի օբյեկտներ և այլն/ սանիտարական մաքրության և աղբահանության վիճակն ուսումնասիրելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

- Համբարձումյան Հ. _ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ, աշխատանքային խմբի ղեկավար
- Ավետիսյան Ս. _ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ
- Ստեփանյան Ն. _ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ
- Պետրոսյան Մ. _ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ
- Իսոյան Ա. _ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի առաջին կարգի մասնագետ
- Բադալյան Ն. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի առաջին կարգի մասնագետ

Աշխատանքային խմբի աշխատանքներին անհրաժեշտության դեպքում ներգրավել „Սևան,, ԱՊ,, ՊՈԱԿ-ի, ՀՀ ԱՆ ՊՀՏՏ Գեղարքունիքի մարզային կենտրոնի և բնապահպանական մարզային տեսչության աշխատակիցներին /համաձայնությամբ/:

1. Ուսումնասիրությունների արդյունքների մասին 15- օրյա պարբերականությամբ տեղեկատվություն ներկայացնել մարզպետին:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Գ. Ստեփանյանին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ